Նառա Վարդանյան (ՀՀ), համայնքային գործիչ

ԼԻՊԵՑԿԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ

Հայ ժողովուրդը պատմանական տարբեր ժամանակաշրջաններում, խուսափելով պատերազմական իրավիճակներից, երկրաշարժից, տնտեսական-քաղաքական ճգնաժամից, բնակություն է հաստատել աշխարհի բոլոր անկյուններում: Այսպես է առաջացել աշխարհասփյուռ հայությունը:

Սփյուռքահայությունը կարևոր ներդրում է ունեցել և այսօր էլ ունի տարբեր երկրների (ուր ստեղծվել են գաղթօջախներ՝ ՌԴ, Եվրոպա, ԱՄՆ, Միջին Ասիա) քաղաքական, սոցիալ-տնտեսական, հասարակական, կրթամշակութային կյանքում[370]:

Գաղութներից յուրաքանչյուրն իր հնարավորությունների սահմաններում ներդրում է ունեցել ազգային ավանդների պահպանման, երկու ժողովուրդների մշակութային կապերի ձևավորման ու հարստացման մեջ[371]: Սփյուռքում ապրող յուրաքանչյուր հայ գիտակցում է, որ ազգագոյատևման և ազգապահպանման կարևորագույն պատվարը հայ երեխաներին հայեցի կրթություն, ազգային դաստիարակություն տալն է: Այս նպատակն իրականացնելու դեպքում զերծ կմնանաք ուծացումից՝ այլ ազգերի հետ ձուլման վտանգից:

Աշխարհի որ ծայրերում էլ եղել է հայը, իր հոգու խորքում փայփայել է հայրենիքի գաղափարը, չի մոռացել իր գիրն ու գրականությունը, լեզուն, պատմամշակութային արժեքները, ավանդույթները, չի կորցրել ազգային դիմագիծը, այլ պահպանել ու զարգացրել՝ փոխանցելով հաջորդ սերունդներին:

«Հայն ապրելով օտար հողում, շփվելով և հաղորդակցվելով տարբեր ազգերի ու ժողովուրդների հետ՝ այն իր մեջ ինքնատիպ կամուրջ է ստեղծել, որը կարողացել է ներդաշնակորեն միացնել իրար՝ ազգայինի և օտարի առանձնահատկությունները»[372]:

Պատմությունից մեզ հասած տվյալների հիման վրա՝ կարելի է ասել՝ որքան դժվար է եղել օտար հողում ապրելն ու արարելը: Հայ ազգն ինտեգրվել է, սերտ բարեկամական փոխհարաբերություններ

---

[370] Հարությունյան Ն., «Մանկավարժական միտք. Հայ կրթական գործը սփյուռքում», Ե., 2010, «Զանգակ – 97» հրատարակչություն, «Սփյուռքի հայկական դպրոցների ժամանակակից խնդիրները», էջ 5

[371] Բարխուդարյան Վ., Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների պատմություն (XVII դարի կես-XX դարի սկիզբ),Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն 2010, էջ 7:

[372] Հարությունյան Ն., «Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցները», Ե., 2002, «Զանգակ – 97», էջ 8:

հաստատել տվյալ երկրի հետ հանուն իր ժողովուրդի հայապահպանման և ազգային դիմագծի պահպանման:

Այսօր սփյուռքահայ կրթական համակարգը ունի երկու կարևոր խնդիր՝

1. Դաստիարակել իր մայրենի լեզվին տիրապետող հայ երիտասարդություն՝ իբրև ազգապահպանման կարևորագույն գործոն:

2. Իրականացնել հայեցի ազգային դաստիարակություն՝ իբրև հայրենասիրության, ազգի անկախության պահպանման և ուժացումից խուսափելու հիմնական գործոն[373]:

Հայերը տարբեր ժամանակաշրջաններում հաստատվել են Ռուսաստանի Դաշնության տարբեր քաղաքներում, ձևավորվել են մեծ և հզոր հայ համայնքներ. հայերի թիվը ավելացել է և ավելանում է, հայաշատ բնակչություն ունեցող տարածաշրջաններում կառուցվել են եկեղեցիներ, ստեղծվել են հայկական համայնքներ, հիմնվել են բազում մեկօրյա դպրոցներ (կիրակնօրյա դպրոցներ): Դպրոցները հիմնականում գործել են ազգային եկեղեցուն կից կամ ազգային-մշակութային որևէ միության հովանավորությամբ:

Հայ համայնքներում գործող դպրոցների ուղենիշն է՝ իրականացնել կրթամշակութային և հայապահպանման գործունեություն. հայ երեխային օտար միջավայրում հայ պահել, նրան հայեցի դաստիարակություն տալ, սերմանել հայրենասիրություն, ազգային արժեքների գիտակցում և հպարտություն իր ազգային պատկանելության նկատմամբ: Ամեն գնով դրանց պահպանումը սփյուռքահայության հայրենասիրության և անձնվիրության դրսևորումներից է:

Ռուսաստանի Դաշնության Լիպեցկ քաղաքի նորաստեղծ հայ համայնքի ջանքերով բազմաթիվ խոչընդոտներ հաղթահարելով՝ 2002 թվականին հիմնվել է մեկօրյա հայկական դպրոց: Սկզբնական շրջանում դասընթացներն անց են կացվել ուսումնական գործընթացին անհամապատասխան պայմաններում և միայն բարերարների աջակցության և ազգասեր ծնողների ջանքերի շնորհիվ հետագայում վարձակալվել է ուսումնական հաստատություն:

Հայ ժողովուրդն առանձնահատուկ հակվածություն ունի մշակույթի նկատմամբ: Մշակույթը պահպանել և զարգացրել են օտար երկնակամարների տակ ծվարած ու կենսահաստատ կյանքով ապրող հայ համայնքներում[374]:

---

[373] Գյուլամիրյան Ջ. Հ., Հայ մնալու փրկարար օղակները՝ ընտանիքը, լեզուն, եկեղեցին, «Հայ կրթական գործը սփյուռքում», Ե., ժողովածու, «Ձանգակ – 97» 2008, էջ 10:

[374] Բարխուդարյան Վ., Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների պատմություն (XVII դարի կես-XX դարի սկիզբ),Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն 2010, էջ 214:

Ինչպես մեծն Կոմիտասն է ասել. «Պարն է արտահայտում յուրաքանչյուր ազգի բնորոշ գծերը, մանավանդ բարքն ու քաղաքակրթության աստիճանը»:

Լիպեցկի հայ համայնքի մշակութային կյանքի ձեռքբերումները չենք կարող համեմատել ավելի վաղ կայացած համայնքների հետ, օրինակ՝ Հարավային Ռուսաստանի՝ Սոչիի, Լազարևի, Կրասնադարի հայ համայնքների հետ[375]: Այնուամենայնիվ, այստեղ քայլ առ քայլ մշակութային կյանքը սկսել է առաջընթաց ապրել, ձևավորվել է «Կռունկ» ազգագրական երգի և պարի խումբը, համանուն երիտասարդական կազմակերպությունը: Երեխաները մեծ սիրով են մասնակցում ինչպես հայկական, այնպես էլ ռուսական դպրոցներում իրականացվող միջոցառումներին՝ ներկայացնելով ազգային երգն ու պարը:

Դպրոց հաճախող երեխաներից ձևավորվել է թատերական խումբ, որի խաղացանկում գերակշիռ տեղ են գրավում հայ հանճարների ստեղծագործությունները: Հատկապես Հովհաննես Թումանյանի հեքիաթներն ու պատմվածքները երեխաները շատ են սիրել: Կարճ ժամանակում վերամշակվել և բեմադրվել են՝ «Անխելք մարդը», «Տերն ու ծառան», «Գիքորը», «Սուտլիկ Որսկանը», «Քաջ Նազարը» և այլն: Բարդ է թերագնահատել այս ստեղծագործությունների ուսուցողական և դաստիարակչական բնույթը:

Համայնքում ստեղծվել է հոգաբարձուների խորհուրդ, որի ներկայացուցիչները քննարկում են բազմաբնույթ հարցեր՝ կապված համայնքային խնդիրների, ապագա ծրագրերի, դպրոցի գործունեության հետ:

Այսօր դպրոց են հաճախում ավելի քան 150 աշակերտներ, ինչպես ազգությամբ հայ, այնպես էլ օտարազգիներ: Հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները, հայերենի իմացությունն ու հետաքրքրությունները՝ կազմավորվել են հետևյալ խմբերը՝

- նախադպրոցական խումբ
- տարրական խումբ
- միջին խումբ
- ավագ խումբ

Դպրոցի գործունեության հիմնական նպատակներից են ապահովել սաների գրաճանաչությունը, խոսքի զարգացումը և ազգային մշակույթը:

---

[375] Ժամկոչյան Ա. (հեղինակային խմբի ղեկավար), Հեղինակային խումբ՝ Գալստյան Դ., Սավվա Մ., Մարտիրոսյան Ս., Գեղամյան Վ., Թավադյան Տ., Ղանալանյան Տ., «Հայկական համայնքների ինքնակազմակերպման խնդիրները Հարավային Ռուսաստանում»: Ե., Նորավանք - 2010, էջ 36:

Լիպեցկի մեկօրյա դպրոցում դասավանդվում են հետևյալ առարկաները՝ մայրենի լեզու և գրաճանաչություն, խոսքի մշակում և զարգացում, հայ գրականություն, ասմունք, հայոց պատմություն, Հայաստանի աշխարհագրություն, ազգային երգ և պար, Հայոց եկեղեցու պատմություն և այլ առարկաներ: Անհրաժեշտ է նշել նաև, որ ուսումնական գործընթացում կատարվում են փոփոխություններ՝ հաշվի առնելով մարզային առանձնահատկությունները:

Մեծ շուքով նշվում են ազգային տոները, ծեսերը, ՀՀ-ի պատմական իրադարձությունները՝ Նոր Տարին, Սուրբ Ծնունդը, Տեառնընդառաջը, Սուրբ Զատիկը, Հայոց բանակի կազմավորման օրը, Վարդավառը, ՀՀ անկախության օրը և այլն: Ազգային տոներին ընդառաջ կազմակերպվում են լրացուցիչ դասընթացներ, որոնք օգնում են երեխային ավելի մոտ լինել հայական ավանդույթներին: Հմուտ ուսուցիչները երեխաներին ներկայացնում են տեղեկություններ ազգային ծեսերի, խոհանոցային առանձնահատկությունների վերաբերյալ:

Դպրոցի առաջնային նպատակներից են համախմբել հայ երեխաներին, իրականացնել հայեցի ուսումնա-կրթադաստիարակչական գործընթացը և ամրապնդել համայնքի կապը հայրենիքի հետ: Դպրոցն ակտիվություն է ցուցաբերում տեղի կրթամշակութային կյանքում:

Հայկական համայնքը գտնվում է տեղի իշխանությունների հովանու ներքո և տարաբնույթ աջակցություն է ստանում պետությունից, որի վառ ապացույցն է «Ազգերի տուն» հասարակական կազմակերպությունը: Այն հնարավորություն է ստեղծում ազգային ինքնության ճանաչման և պահպանման գործընթացների իրականացմանը: Համայնքին է հատկացվել տարածք, որտեղ կազմակերպվում են հավաքույթներ, մրցույթներ, խաղեր և տարբեր միջոցառումներ: Անհրաժեշտ է նշել նաև, որ տվյալ կազմակերպությունը նպաստում է նաև ազգային փոքրամասնությունների փոխհարաբերությունների զարգացմանը:

Համայնքի նախաձեռնությամբ և հատուկ հրավերներով դպրոցի սաները մասնակցում են հայ և ռուս ազգի հանճարներին նվիրված գրական երեկոներին, ազգային փոքրամասնություններին նվիրված միջոցառումներին, ցուցահանդեսներին, բազմաբնույթ մշակութային իրադարձություններին և մրցույթներին՝ բազմիցս նվաճելով մարզային պարգևներ: Յուրաքանչյուր տարի Լիպեցկի մարզում ազգային փոքրամասնությունների համար կազմակերպվում է «Մենք միասին ենք» խորագրով փառատոնը, որտեղ մասնակցում են բազմաթիվ ազգեր, փառատոնը բացվում է ազգային խոհանոցով, մասնակիցները ներկայացնում են ազգային ուտեստները, որից հետո ներկայացվում է ազգային պարը, երգը և ասմունքը: Այստեղ շատ կարևոր է

մի հանգամանք, որ հայ երիտասարդները շփվում են տարբեր ազգերի հետ, ծանոթանում, տեսնում, ունկնդրում նրանց մշակութային տարրերը, և արդեն իրենք են վերլուծում, համադրում, արժևորում և գնահատում սեփական մշակույթը: Նմանատիպ միջոցառումները հայ երիտասարդների մեջ արթնացնում են ձգտում՝ ազգային արժեքների պահպանման և սերունդներին փոխանցելու:

Անհրաժեշտ է փաստել, որ տարածաշրջանում հայկական եկեղեցու բացակայության պայմաններում շատ բարդ է դառնում ազգային և եկեղեցական ինքնության պահպանումը: Եկեղեցական տոները, միջոցառումները անց են կացվում այլ վայրերում կամ օգտվում են ուղղափառ եկեղեցուց: Միակ հայկական սրբավայրը, որ այժմ գոյություն ունի Լիպեցկի մարզում կենտրոնական գերեզմանատանը տեղադրված խաչքարն է:

Հայ համայնքի միասնականության վկայությունն է նաև այն, որ 2015 թվականի մայիսին տեղի ունեցավ 70 հայ երեխաների մկրտությունը Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի հովանու ներքո:

Երկար տարիներ դասավանդելով տարբեր տարիքային խմբերի երեխաներին, մասնակցելով համայնքի ներսում կազմակերպվող տարբեր միջոցառումներին, համագումարներին՝ գալիս է մի պահ, երբ ակնհայտ է դառնում հայոց լեզվի չիմացությունը և այն չկիրառելը: Հիմնականում դասերի ընթացքում երեխաներին պարտադրում ենք խոսել հայերեն և ծնողներին նույնպես խնդրում ընտանիքում հաղորդակցվել մայրենի լեզվով: Դասից դուրս, անգամ դասամիջոցների ընթացքում երեխաներն սկսում են իրար հետ հաղորդակցվել ռուսերենով: Երիտասարդները, որոշ չափով տիրապետելով հայոց լեզվին, ունենալով շփվելու համար անհրաժեշտ բառապաշար, ամաչում են այն գործածել: Սա արդեն հայկական սփյուռքի օտարին ձուլման նպաստող հիմնախնդիրներից է:

Հայ համայնքների զարգացման և առաջընթացի հարցում մեծ դեր է խաղում ֆինանսավորումը, քանի որ յուրաքանչյուր նոր ծրագիր, նոր գաղափար ի կատար ածելու համար անհրաժեշտ են նյութական միջոցներ, որի բացակայության պայմաններում հաճախ համայնքների ներսում հնարավոր չէ որևէ նոր մտահղացման կամ նոր գափարների իրականացում: Ֆինանսների բացակայությունը մեծ խոչընդոտ է համայնքների լիարժեք կայացման համար: Ֆինանսների սղության պայմաններում համայնքը փորձում է ապահովել աշակերտների և ուսուցիչների մասնակցությունը հայրենիքում իրականացվող միջոցառումներին: Մասնակցել ենք Սփյուռքի նախարարության կողմից կազմակերպած «Արի Տուն» ծրագրին, «Իմ Հայաստան» համահայկական փառատոնին, ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին և այլ ծրագրերի:

Կարելի է ասել՝ հայրենիք և սփյուռք կապն ամուր է, և նմանատիպ միջոցառումները ավելի են նպաստում հայապահպանման գործընթացին, ազգային ոգու, ազգային դիմագծի պահպանմանը:

Բազմաթիվ համայնքների հետ փորձի փոխանակման ընթացքում եկանք այն եզրահանգման, որ մեկօրյա դպրոցներում ուսումնական գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար անհարաժեշտ են որոշակի պայմաններ.մանկավարժները պետք է տիրապետեն ուսուցման արդիական մեթոդներին, կարողանալ կարճ ժամանակում մեծ արդյունքի հասնել, պետք է ապահովվեն ծրագրերը, դասագրքերը և ձեռնարկները:

Երկար տարիներ աշխատելով հայկական սփյուռքում, ուսումնասիրելով հայկական գաղթօջախների կազմավորման և կայացման պատմական ուղին՝ կարելի է եզրակացնել, որ հայկական գաղութները հիմնվում և զարգանում են եկեղեցու և հայկական կրթօջախի շնորհիվ: Այս երկու հայ օջախները հիմքն են նախ՝ հայության համախբվելու, ապա՝ ազգային դիմագծի պահպանման:

Ինչպես Ռուսաստանի Դաշնության տարածքում կազմավորված նոր համայնքները, այնպես էլ Լիպեցկի հայ համայնքն ունի բազմաթիվ խնդիրներ, որոնք ունեն ուսումնասիրության կարիք, որոնք դեռևս բավարար չափով ուսումնասիրված չեն, սակայն անհերքելի փաստ է, որ այդ խնդիրները հիմնականում նույնն են:

Որպես վերջաբան կցանկանայի մեջբերել հանրահայտ փիլիսոփա և կրթության տեսաբան Ջ. Դյուիի խոսքերը.«Կրթությունը սոցիալական գործընթաց է, իսկ դպրոցը պարզապես հասարակական կյանքի ձևն է, որտեղ կենտրոնացված են այն կազմակերպությունները, որոնք առավել արդյունավետությամբ են հաղորդում երեխային նախորդ սերնդի կուտակած ժառանգությունը և սովորեցնում են, թե ինչպես օգտագործել անձնական ուժերը հասարակական նպատակների համար»:

Нара Варданян (РА), *Культурно-образовательная жизнь армянской общины Липецка*.

Nara Vardanyan (RA), *Educational and Cultural Life of the Armenian Community of Lipetsk*.